# Նորոգենք մեր ուխտն Աստուծո հետ

## Հարցազրույց Երեւանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի հիմնադիր-դեկան գերաշնորհ տեր Շահե արք. Աճեմյանի հետ

*Սկիզբը՝ էջ 2*

Այս է, ինչ որ կուզեի ըսել մեր գործին մասին եւ ավելցնել, թե ի սրտե կը մաղթեմ, որ ամեն տարի քայլ մը առաջ երթանք՝ մեր նոր սերունդի կրթության գործին մեջ, ամեն տարի նոր էջ մը բանանք անոնց առջեւ, եւ իրենք տեսնեն, թե, ինչպես կ'ըսե Խորենացին, փոքր ածու մըն ենք, բայց մեզ մոտ քաջության գործերը բնավ չեն պակսած եւ չպիտի պակսին:

**- Գալով մեր հայրենիքին, սրբազա՛ն հայր...**

- Այսօր ես կուզեմ մեր հայրենիքի մասին պարզ խոսք մը ըսել. մեր հայրենիքը մեզի համար սուրբ է, որովհետեւ մերն է: Երբ կերթանք ուրիշ երկիրներ, կը տեսնենք հսկայական մայրաքաղաքներ շինված եւ այլն եւ այլն, չենք զգար անոնց մեծությունը, ինչպես կ'զգանք մեր խեղճ գյուղին հրաշալի հոտը, մեր լեռներու այդ սիգապանծ գեղեցկությունը, մեր գետերու այդ ալիքներու հանած աղմուկը, ինչպես կոչված է, Սյունիքի Որոտանի որոտացող ալիքները: Եվ այդ բոլորը մեզի կը խոսին, որովհետեւ մերն են, մեր պատմությունն են, մեր քաջությունն են:

Եվ այսօր, երբ Աստված ուզեց, որ մեր սերունդը տեսնե մեր երկրին անկախությունը եւ տալ մեզի այնքան հայրենասիրություն եւ նվիրվածություն, որ մենք կարենանք 600 տարիներ հետո տեսնել բանակ մը՝ հայկական բանակ մը, որ հաղթական դուրս կուգա պատերազմի դաշտեն եւ նահատակներով չէ, որ կը պարծենա, այլ քաջերով ու ռազմիկներով: Նորոգենք մեր Ուխտը Աստուծո հետ, եւ այդ Ուխտեն պիտի ծնի ո՛չ միայն կառավարության ձեւով անկախություն, այլ իր հզորությամբ անկախ հայրենիք մը, անկախություն, որը պիտի իրագործե, ինչ որ մեր հայրերու երազը եղավ դարերով ու դարերով:

Այո՛, իշխանության փափագը կարեւոր է, պետք է ունենանք իշխանավորներ, պետք է, որ անոնք պայքարին աթոռի հասնելու համար: Սակայն այդ չէ երկրի նպատակը: Նպատակը այն է, որ հայը, երբ ուզե ծառայել իր երկրին, այդ ծառայությունը ըլլա ոչ թե աղմուկ հանելով, այլ աշխատանքով, նվիրվածությամբ եւ ներքին մղումով, զոհաբերությամբ:



Մենք շատ հաճախ մեր նահատակները կը հիշենք: Մենք եթե չունենայինք այսօր ազատ, անկախ Հայաստան, անոնց նահատակությունը գտած պիտի չըլլար մի մեծ երազ իրագործելու պարծանք: Անոնց արյունեն ծնավ այս երկիրը, եւ այդ նվիրվածությամբ պիտի զարգանա: Մեր երկիրը պիտի հառաջադիմե, մեր երկիրը պիտի տեսնե այն օրը, որ մեր հեռացած զավակները կամաց-կամաց վերադարձի ճամփան գտնեն, գան եւ մասնակցին մեր երկրի շինարարության: Եվ այդ ոգին է, որ պիտի հաղթե մեր բոլոր դժվարություններուն, մեր պարտականության զգացումը, թե ամեն հայ պարտի ձեւով մը մի նվեր տալ իր հայրենիքին՝ իր աշխատանքով, իր նվիրվածությամբ եւ իր օգնությամբ:

Մենք ցվրված ժողովուրդ մը չենք, մենք միացյալ ժողովուրդ մըն ենք: Ուրեմն, ո՛ւր ալ որ գտնվինք, ո՛ր երկրին մեջ, ո՛ր լեզվով ալ խոսինք, մեկ բան պիտի մեզի համար ըլլա գերագույն սրբություն, այն է, ինչպես բանաստեղծը կ'ըսե, որ մեզի հայ կ'ըսեն: Հայ ենք մենք ո՛չ միայն մեր ներքին գիտակցությամբ, ո՛չ թե միայն մեր զգացումներով, ո՛չ թե միայն մեր հայրենասիրությամբ: Մենք հայ ենք, մանավանդ, որովհետեւ հպարտ ենք մենք մեզմով, եւ այդ հպարտությունը պետք է ամեն ձեւով արդարացնենք:

Եվ այդ արդարացումը պիտի կերտե մեր նոր պատմությունը, եւ մեր նոր պատմությունը մեր բոլոր դժվարություններով հաղթելու պատմությունը պիտի լինի:

Սիրելի հայորդիներ, Ամանորի եւ մեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնի առիթով ես կուզեմ մաղթել բոլորիդ, որ ամեն բանե առաջ աղոթեք եւ խնդրեք Աստուծմե, որ տեր ըլլա մեր բոլոր ճիգերուն, մեր բոլոր երազներուն, եւ մենք նայինք մեր ապագային լավատեսությամբ եւ վստահությամբ:

Աստված պահե մեր ժողովուրդը, Աստված բոլորիդ տա, ինչ որ խնդրեք Իրմե, եւ դուք ձեր խնդրանքներին մեջ վստահ եղեք, թե Աստված մեզի հետ է եւ մեզի հետ պիտի ըլլա հավիտյանս: Ամեն:

*Հարցազրույցը վարեց*
*Վարուժան ՈՍԿԱՆՅԱՆԸ*

---

> *«...Եւ յաստուածային ներհեղմամբ շնորհաց այնքան առատացաւ յարդիւնս բանից մինչ զի համարձակիմ ասել. թէ զաղօթական բանս իւր արար համառօտարան իմն Աստուածաշունչ եւ իբր երկրորդ Աւետարան»:*
>
> *Հակոբ պատրիարք Նալյան*

# ՆԱՐԵԿ ԱՂՈԹԱԳԻՐՔԸ

## *Եկեղեցածիսական մատյան է*

Սուրբ Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը՝ «Նարեկը», դարերի հոլովույթում բնորոշվել է միեղեն եզրույթով՝ աղոթագիրք, ինչը հարազատ արտահայտիչն է Մատյանի իսկ բովանդակության: «Նարեկն» ստեղծվել է որպես «ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ»: Այն Արարչի եւ արարածի միջեւ կենսական զրուցարան է, որում, ինքնին, ենթադրելի են զանազան բնույթի խոսակցություններ, բազմազան խնդիրների առաջադրում եւ դրանց համար հարկավոր պատասխանների ու լուծումների ակնկալություն: Այսուհանդերձ, Նարեկյան խոսքն Աստծո հետ ոչ թե հախուռն է, ոչ թե բազմանպատակ (թեեւ, ինչպես նշեցինք, զանազան խոսակցություններ են ենթադրվում), այլ ունի մեկ նպատակ, մեկ առաքելություն, որովհետեւ այդ խոսակցությունները, որպես տարբեր ուղիներ, հանգուցալուծվում են մեկ վայրում, մեկ նպատակակետում, որ է՝ «Գիրք սրբոյս Գրիգորի՝ է՛ նիւթ եւ պատճառ դարձման մեղաւորաց, եւ ուրախութեան Ամենասրբոյ Երրորդութեան» (Հակոբ պատրիարք Նալյան): Այսինքն՝ «Նարեկ» աղոթագիրքն իր խոսքաբանությամբ մարդ արարածին «շարժէ... ի զղջումն», որն էլ, Տերունի խոսքի համաձայն, մեծ ուրախություն է պարգեւում Երկնավոր Թագավորին (հմմտ. Ղուկ. ԺԵ 7):



Համաձայն քրիստոնեական մեր ուղղափառ վարդապետության՝ եկեղեցու՝ հավատացյալների միության կյանքում գոյություն ունի երկու կենսակերպ՝ ընդհանրական եւ առանձնական: Այս երկուսը, ըստ ինքյան, հոգեւոր կյանքի յուրօրինակ դրսեւորումներ են: Ինչպես որ ներդաշնակ կարգավորությամբ է արարված համայն տիեզերքը, այնպես եւ կարգավորյալ է եկեղեցու ընդհանրական ու առանձնական հոգեւոր կյանքը. հոգեւոր կյանքում որեւէ անկանոնություն չի՛ կարող լինել, քանզի աններդաշնակության թեկուզ մեկ նշանախեցի իսկ առկայությունն ինքնին քաոսի պատճառ պիտի լինի: Իսկ քաոսային վիճակը բնավ չի՛ կարող խաթանել մարդկային հոգու փրկագործումը: Հետեւաբար, այն, որ Տիրոջ համբարձումից հետո աշխարհ առաքվեց Ճշմարտության Հոգին՝ Ամենասուրբ Երրորդության երրորդ Անձ Սուրբ Հոգին, հետապնդում է հավատքի ճշմարտության անեղծանելիությամբ՝ հոգեւոր կյանքի անխաթարությունն ու իսկությունը, որոնց համաձայն՝ միայն մարդը կարող է փրկվել, հավիտենական փրկությունը ժառանգել:

Ճշմարտության Հոգու առաքելության անդաստանն էլ եկեղեցու կյանքն է, որտեղ ամենայն ինչ պիտի հաստատվեր ճշմարտապես ու իմաստությամբ, եւ այդ ամենը պետք է հաստատվեր ոչ այլ կերպ, եթե ոչ եկեղեցում առկա ընտիր անոթների՝ շնորհընկալ հայրերի ու վարդապետների միջոցով: Ահա եւ աստվածային ներշնչմամբ եւ «յաստուածային ներհեղմամբ շնորհաց»՝ եկեղեցական հայրերի ու վարդապետների կողմից կառուցվեցին, կարգվեցին, կուտակվեցին ու դիզվեցին զանազան աստվածաշունչ (այսինքն՝ Սուրբ Հոգու ներշնչանքով գրված - Ա. Ք.) գրվածքներ, կանոններ ու կարգեր, որոնք հիմնարկեցին անխորտակելի շինվածքը քրիստոնյայի թե՛ ընդհանրական եւ թե՛ առանձնական հոգեւոր կյանքի: Հոգեւոր կյանք, որտեղ չկա՛ որեւէ անճշտություն եւ սխալմունք: Հոգեւոր կյանքի շինվածք, որի հենքն ու առանցքն «ի խորոց սրտի խօսքն» է Արարիչ Աստծո հետ: Եվ աղոթական այս առանցքը եկեղեցական հայրերի կամայականությունը չէ, սա պատգա՛մ է աստվածային, սա հրահա՛նգ է առաքելական. «Արթուն կացեք այսուհետեւ, ամեն ժամ աղոթք արեք»,- պատգամում է Քրիստոս Աստված (Ղուկ. ԻԱ 36), «Հաճախ աղոթեցեք՝ աղոթքի մեջ արթուն մնալով գոհությամբ»,- հրահանգում է սբ. Պողոս առաքյալը (Կողոս. Դ 2): Արդ, «յամենայն ժամ աղօթս արարէք», «զի մի՛ անկանիցիք ի փորձութիւն», քանի որ «ո՞չ ապաքէն իբրեւ զփորձութիւն են վարք մարդոյ ի վերայ երկրի» (Յոբ Է 1):

Սբ. Գրիգոր Նարեկացին ոչ միայն նշանավոր է նրանով, որ ապրել է սրբակենցաղ կյանքով, ոչ միայն այն բանի համար, որ դրանով իսկ հայ ժողովրդի կողմից ճանաչվել է սուրբ, այլեւ Հայոց եկեղեցու կողմից դասվել սրբոց շարքում, քանի որ նա նաեւ եկեղեցական հայր է եւ վարդապետ (տե՛ս Շնորհք եպս. Գալուստյան (Պատրիարք Կ. Պոլսո), «Տեղիք աստուածաբանութեան», Երուսաղէմ, 1993, էջ 27, 29): Հետեւաբար, նրա ստեղծագործությունները եկեղեցու կողմից ճանաչվել են աստվածաշունչ եւ դիտվել են օգտակար «վարդապետության, հանդիմանության, ուղղելու եւ արդարության մեջ խրատելու համար, որպեսզի կատարյալ լինի Աստծո մարդը՝ ամրացած բոլոր բարի գործերի համար» (Բ Տիմոթ. Գ 16-17): Եթե սբ. Գրիգոր Նարեկացու ամբողջական ժառանգությունը համարվել է աստվածային ներշնչմամբ եւ երկնառաք շնորհների ներգործությամբ ստեղծված, ապա ուրեմն «Ողբերգության մատյանը» եւս, որ սրբի ստեղծագործությունների թագն ու պսակն է, միանշանակ գրվել է Սուրբ Հոգու ներշնչումով, ինչի մասին եւ վկայում է հենց ինքը՝ սբ. Գրիգոր Նարեկացին: Այսուամենայնիվ, այստեղ մենք բնավ չենք անտեսում սբ. Գրիգոր Նարեկացու անհատական մասնակցությունն աղոթագրքի գրության գործընթացում. ինչպես Աստվածաշունչ մատյանի գրքերը գրվեցին Աստծո ներշնչմամբ, սակայն զանազան հեղինակների կարողությանց (անհատական, հոգեբանական եւ ինքնատիպ գրական առանձնահատկություններ) համաձայն, այնպես եւ «Նարեկը» ծնվեց սբ. Գրիգոր Նարեկացու ներաշխարհից, բայց Բարձրյալի գործակցությամբ, զորակցությամբ եւ առաջնորդությամբ. «Զսկսեալս իմ դու կատարեա՛, եղիցի՛ Հոգի Քո խառնեալ ի սա, շունչ զաւրութեան Մեծիդ միացի՛ ի Քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս: Զի Դու տաս զաւրութիւն վհատեալ սրտից եւ ընդունիս փառս յամենեցունց»:

Հնարավոր թյուր ընկալումը բացառելու համար հարկ ենք համարում նշել, որ երբ եկեղեցական հայրերի ու վարդապետների գրվածքների պարագայում գործածում ենք «աստվածաշունչ» եզրը կամ «Սուրբ Հոգու ներշնչանքով գրված» արտահայտությունը, ապա ի նկատի ունենք այն, որ դրանք թեեւ մարդկային «մտաց երկունք» են, սակայն ստեղծվել են Սուրբ Հոգու շնորհաց ներգործությամբ՝ ի սպաս եկեղեցու հոգեմտավոր լուսավորության եւ պայծառության, իսկ Սուրբ Գրքի աստվածաշունչ լինելու մեկնաբանությունն այն է, որ հեղինակներն իրենց «սեպհական ոճով..., իրենց ընտանի օրինակներով՝ իրենց յատուկ եղած բացատրութեամբք եւ բառիւք իսկ» գրեցին «Աստուծոյ առ մարդ յայտնել ուզած ամեն ճշմարտութիւնները, ինչպէս նաեւ Իր կամքը», ըստ այսմ՝ Սուրբ Գիրքն է՛ «բան Աստուծոյ եւ Աստուածային յայտնութիւն» ի փրկություն ամեն մի հավատացյալ անձնավորության:... Ուղղափառ մեր վարդապետության համաձայն՝ եկեղեցական հայրերի ու վարդապետների բոլոր գործերը գալիս են «լցուցանելու զպէտս կարեաց» եկեղեցու հոգեւոր կյանքի: Եկեղեցական այդ գրվածքներում կան որոշ մասյաններ ու ժողովածուներ, որոնք կիրառվում են եկեղեցու ընդհանրական աստվածպաշտության ընթացքում: Այդ մասյանները հայտնի են որպես եկեղեցածիսական (զոր օրինակ՝ «Ճաշոց», «Մաշտոց» եւն), որոնցով կարգավորվում եւ կատարվում են եկեղեցու ընդհանրական աղոթքները, խորհրդակատարությունները, սրբազան արարողությունները: Եկեղեցական մասյաններ էլ կան, որոնք կոչված են այլեւայլ գործառույթների («Տոնացույց», «Տաղարան» եւն):

*Շարունակությունը՝ էջ 7*

# ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

## ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ Գ ՕՁՆԵՑԻ



*Սկիզբը՝ էջ 3*

726 թվին Հովհաննես Օձնեցին գումարեց Մանազկերտի ժողովը, որի նպատակը հայոց եւ ասորվոց միջեւ տեղ գտած ընդհարումներին վերջ տալն էր: Մեջտեղ էր եկել Սեւերոսի եւ Հուլիանոսի տարածայնության հետեւանքով երկփեղկված ապականության խնդիրը՝ անգամ միաբնակների շրջանում: «Ի հարկէ» կամ «ի կամաց» ապականության տարբերության խնդիրն այնպես աղավաղվեց Սեւերոսի եւ Հուլիանոսի հետեւորդների կողմից, որ սեւերյաններն հանգեցին աստվածաչարչարության, իսկ հուլիանյանք՝ երեւութականության, որոնցից առաջինը տարածվել էր ասորիների, եւ երկրորդը՝ հայերի շրջանում: Երկու կողմերի հոգեւոր առաջնորդներն աշխատում էին ուղղափառ վարդապետության սկզբունքները ճշտել, քանի որ երկու ասորի հոգեւոր այրեր՝ Բարշապուհ կամ Բարխադբըշաբբա Նփրկերտցի քահանան եւ Գաբրիել Բեթեզրացի սարկավագը սխալ գրություններով եւ սուտ ամբաստանություններով վիճակն այնպես էին բարդացրել, որ անհրաժեշտ էր կարգավորել երկու եկեղեցիների միջեւ եղած հարաբերությունները: Ասորվոց Աթանաս Գ Անտիոքացի պատրիարքը եւ Հովհաննես Գ Օձնեցի Հայոց կաթողիկոսը նամակագրություն հաստատեցին, որի արդյունքում էլ ծագեց եկեղեցական ժողով գումարելու խնդիրը: Սկզբում նախատեսվում էր ժողովն անցկացնել Արզոնում կամ Արզնում, սակայն Արմինիայի ոստիկան Վալիդի կամ Վլիթի հարկադրանքով որոշվեց ժողովատեղի դարձնել Ապահունյաց գավառի Մանազկերտ քաղաքը: Ժողովին մասնակցեցին Հայոց կաթողիկոսը՝ 23 եպիսկոպոսներով եւ 8 վարդապետներով, եւ ասորվոց պատրիարքը՝ 6 եպիսկոպոսներով: Հայկական կողմից մասնակցեցին Հարքի Աղբեոս, Ոստանի Թադեոս, Մամիկոնեից Սահակ, Բասենի Հեսու, Տայոց Սարգիս, Բզնունյաց Թեոդորոս, Արշամունյաց Թեոդորոս, Արշարունյաց Գրիգորիս, Աստղկունյաց Ներշապուհ, Ամատունյաց Հաբել, Ռշտունյաց Դավիթ, Արծրունյաց Հովսեփ, Վանանդի Գրիգոր, Խորխոռունյաց Նարկիսոս, Գողթնի Եսայի, Գնունյաց Հովհաննես, Ռոտակաց Գեորգ, Բագրատունյաց Հովսեփ, Բագրեւանդի Միքայել, Ապահունյաց Երեմիա, Մարդաղի Սողոմոն եւ Արզնի Գաբրիել եպիսկոպոսները եւ Խոսրովիկ Թարգմանիչ, Դավիթ Սուփրի, Սողոմոն Մաքենոցաց, Ռափայել Վանացերեց, Սիմեոն, Հովհաննես քորեպիսկոպոս, Տարոնի Գրիգոր, Սահակ Մանդակունի վարդապետները: Հիշատակվում է նաեւ Սասնո Սարգիս եպիսկոպոսը: Ասորական եկեղեցին ներկայացնում էին Եդեսիայի Կոստանդին, Խառանի Շմավոն, Գերմանիկեի Թեոդորոս, Նփրկերտի Աթանաս, Գարայի Սիմոն, Սամոսատի Թեոդորոս եպիսկոպոսները: Նրանց հետ Մանազկերտ էր եկել նաեւ նշանավոր Խայան Տանուկյան, որը պետք է որ աստվածաբան վարդապետ լիներ: Հայոց եկեղեցու կողմից հմուտ աստվածաբաններ էին Օձնեցին, Խոսրովիկ Թարգմանիչը եւ Գրիգորիս Արշարունին: Եղել են նաեւ նշանավոր քահանաներ ու վանականներ, որոնց անունները պատմությունը չի պահպանել: Նախարարների մասնակցության մասին հիշատակություն չկա:

Մանազկերտի ժողովի գլխավոր նպատակն ապականության ծայրահեղությունների, աստվածաչարչարության ու երեւութականության հերքումն էր եւ ուղիղ դավանության սկզբունքների ճշտումը: Դրանց համեմատ էլ կազմվեցին ժողովի կանոնները: Հավատո դավանություն ներկայացրեցին ասորվոց պատրիարքը եւ հայոց կաթողիկոսը: Վերջինիս ներկայացրածը նման էր սովորական հանգանակի եւ միայն Քրիստոսի մարդեղության հարցում՝ կրից եւ ապականության կետերը մատուցում էր ընդարձակորեն, եւ վերջում ավելացված էին 10 նզովք, որոնք ընդունվեցին ժողովի կողմից: Ժողովը նզովեց թե՛ հուլիանյաններին եւ թե՛ սեւերյաններին:

Մանազկերտի ժողովի քննարկած կարեւոր խնդիրներից մեկն էլ քաղկեդոնականության հարցն էր: Երկու եկեղեցիներն էլ հռչակեցին իրենց հակաքաղկեդոնիկ բնույթը եւ հերքեցին քաղկեդոնականությունը: Ժողովում նաեւ խոսվեց Ծննդյան տոնը դեկտեմբերի 25-ի՞ն, թե՞ հունվարի 6-ին կատարելու, սուրբ խորհրդի հացի խմորո՞վ, թե՞ անխմոր, բաժակի ջրախա՞ռն, թե՞ անապակ լինելու մասին, որոնց խնդրում ասորիները տարբերվում էին հայերից: Սակայն Հայոց եկեղեցին, ի դեմս Օձնեցու, անխախտ թողեց իր հնավանդ ծեսերը: Այլ խոսքով՝ երկու եկեղեցիների միջեւ մի շարք հարցերում տարածայնություններ մնացին: Քննվեցին նաեւ դավանաբանական մի քանի այլ խնդիրներ:

Մանազկերտի ժողովը սբ. Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի, փաստորեն, կարապի երգն էր, որովհետեւ դրանից հետո այլեւս նշանավոր դեպքեր չեն արձանագրված: Կյանքի վերջին շրջանում նա առանձնացավ իր ծննդավայր Օձունում՝ իր համար բնակատեղի ընտրելով մի փոքր հեռու գտնվող Սոթից լեռը, ուր նա մեծ եկեղեցի էր կառուցել: Նա անցավ ճգնավորական կյանքի՝ ընկերակից ունենալով Գեւորգ Սքանչելագործ եւ Մաթեոս Խոտաճարակ վարդապետներին եւ այլ մենակյացների: Նա, ինչպես արդեն նշել ենք, մահացավ 728 թվին՝ մեծ հռչակ բերելով Հայոց եկեղեցուն: «Յայսմաւուրք»-ը նրա հիշատակը դնում է ապրիլի 17-ին, այլ խոսքով՝ այդ օրը կարող է նրա մահվան օրը լինել: Թաղման տեղը հիշված չէ, սակայն ժողովուրդը նրա գերեզմանը՝ որպես ուխտատեղի, համարում է Արդվի գյուղը՝ Օձունի արեւմտակողմում:

Հովհաննես Գ Օձնեցու օրոք մյուս գերիների հետ Հայաստան վերադարձավ նաեւ Գողթնի Խոսրով իշխանի որդի Վահանը: Վերջինս ընդունել էր իսլամը, եւ Օմար Բ-ն չէր կամենում իր դիվանադպիրին թույլատրել վերադառնալ Հայաստան: Համոզելով, որ գնում է միայն իր հայրենի տիրույթի վիճակը պարզելու, դրան տիրելու եւ գործակալ նշանակելու նպատակով եւ որ դրանից հետո վերադառնալու է՝ Վահանը ստացավ խալիֆի համաձայնությունը: Օմար Բ-ն նրան հատուկ հրովարտակով հանձնեց Գողթնը: Հայաստանում լսելով խալիֆի մահվան մասին՝ նա այլեւս որոշեց չվերադառնալ Արաբիա եւ իսլամը թողնելով՝ վերադարձավ քրիստոնեության: Ամուսնացավ Սյունյաց իշխանադստերից մեկի հետ, որի անունը հայտնի չէ: Այսպես նա ապրեց խաղաղության մեջ առնվազն մեկ տասնամյակ՝ մինչեւ նահատակվելը:

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՊԱՐՍԿԱ-ՀՌՈՄԵԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՇԱԿ II-Ի ՕՐՈՔ

Հռոմի եւ Պարսկաստանի միջեւ 359 թվականին վերսկսված պատերազմում Մեծ Հայքի թագավորության դիրքորոշումը կարեւոր էր, քանի որ, ինչպես ցույց էր տվել պատմական փորձը, Հայաստանը, իր կամքից անկախ, ներքաշվելով դրանում՝ դառնում էր հակամարտող տերությունների ռազմական բախումների թատերաբեմ՝ իր ողջ բացասական հետեւանքներով: Արշակ թագավորը ձգտում էր կասեցնել պատերազմական գործողությունների ծավալումը Հայկական լեռնաշխարհում:

Այս անգամ պատերազմի ասպարեզ է դառնում Հյուսիսային Միջագետքը: Պարսկական զորքը պաշարում է Ամիդ քաղաքը: Շապուհ II-ը դիմում է Արշակի օգնությանը: Արշակը համաձայնվում է եւ հրաման տալիս սպարապետ Վասակ Մամիկոնյանին զորագունդ հավաքել: Վասակ Մամիկոնյանը կատարում է թագավորի հրամանը. նա ընտիր ռազմիկներից, անվրեպ ու ուժեղ նետաձիգներից կազմակերպում է լավ սպառազինված մի զորք:

Արշակ թագավորը բազմաթիվ նախարարների հետ Աղձնիքի վրայով մտնում է Արվաստան: Հայոց զորքը պարսիկներից շուտ է հասնում մարտադաշտ եւ բանակ դնում Մծբին քաղաքի դիմաց: Հռոմեական զորքն արդեն բանակել էր հակառակ կողմում: Հայոց զորքը, չսպասելով պարսից զորքի գալուն, կամենում է առանց նրանց հարձակվել կայսերական զորքի վրա, պատերազմի գործն ինքնուրույն գլուխ բերել: Արշակ թագավորն էլ թույլ է տալիս սկսել պատերազմի գործը: Վասակ սպարապետը նախապատրաստում է Հայոց զորքը եւ, ինչպես Բուզանդ պատմիչն է անվանում, Այրարատյան բանակով հարձակվում հռոմեական զորքի վրա ու հաղթում:

Մծբինի ճակատամարտից հետո Արշակ թագավորն իր զորքով սպասում է այնտեղ, մինչեւ հասնում է պարսից Շապուհ թագավորը՝ իր անթիվ-անհամար զորքով: Պատմիչի խոսքով ասած՝ երբ նա գալիս ու տեսնում է հայկական զորքի քաջարի գործը, այն է, որ ճակատ էին կազմել, պատերազմը վարել, հաղթություն տարել եւ ամեն ինչ վերջացրել, շատ ու շատ է զարմանում. հայոց Արշակ թագավորին մեծապես պատվում, ինչպես եւ բոլոր հայոց մեծամեծներին ու հայոց Վասակ սպարապետին:

Այնուհետեւ Շապուհ արքան սկսեց խոսել իր զորքի հետ, թե «ինչպիսի վայելուչ պարգեւներ կամ ինչպիսի հասուցում կարող ենք մենք հասուցել հայոց այս Արշակ թագավորին, որ այսպիսի գործ գործեց, այսպիսի քաջություն ցույց տվեց, այսպիսի թշնամու ջարդեց, այսպիսի պատերազմ մղեց, այսպիսի ճակատամարտում հաղթեց, մեզ համար այսպիսի անուն վաստակեց... Հայոց թագավորը իր զորքով մեր փոխարեն կռվի դուրս գալով՝ այնպիսի՛ քաջություն գործեց, որ ուրիշ ոչ ոք չէր կարող գործել: Արդ՝ ինչպիսի բարիքներ պետք է մենք նրան հասուցենք»: Պարսից նախարարները պատասխանում են Շապուհին՝ ասելով. «Ինչ որ կամենաս, ինչով որ կամենաս՝ կարող ես հաճել նրան»: Շապուհը պատասխանում է. «Այդ, ինչ որ դուք եք ասում՝ սեր չէ. եկեք անքակտելի սեր հաստատենք հայոց Արշակ թագավորի հետ, այնպես որ մինչեւ վերջն անբաժան մնա մեզանից: Ես հայոց Արշակ թագավորին կնության տամ իմ դուստրը եւ այնպիսի մեծ կալված տամ նրան, որ Հայաստանից մեզ մոտ գալիս, մինչեւ մեզ մոտ հասնի, Հայաստանից Տիզբոն իր կալվածում իջեւանի: Իսկ Վասակ զորավարին կամ մյուս մեծամեծներին ու զորապետներին տանք ոսկի, արծաթ, կերպաս եւ մարգարիտ»: Պարսից թագավորի մեծամեծներն ու խորհրդակիցները հավանություն են տալիս այս խորհրդին եւ հաստատում նրա խոսքերը:

Շապուհը ցանկանում է Հայոց Արշակ թագավորին համոզելով տանել Տիզբոն եւ այնտեղ մեծ փառքով նրան իրեն փեսայացնել: Սակայն, ինչպես պատմիչն է ասում, Արշակ թագավորը եւ իր ողջ զորքը ձանձրալի են համարում այդքան երկար ճանապարհ գնալը. նրանք հայ մարդու բնական սովորությամբ՝ պիտի կարոտեին իրենց տուն ու տեղը: Իսկ երբ Փառանձեմ թագուհու հայրը՝ Սյունյաց գավառի նահապետ Անդովկն իմանում է, որ Պարսից Շապուհ թագավորն ուզում էր իր աղջկան կնության տալ Հայոց Արշակ թագավորին, շատ է վախենում. նրա սիրտը կասկած է ընկնում: Հասկանում է, որ եթե Արշակը կին առնի Պարսից թագավորի դուստրը, ապա իր դուստր Փառանձեմը անարգություն կկրի:

Ուստի Անդովկը սկսում է մտածել երկու թագավորների մերձեցումը խափանելու մասին: Նա տարբեր միջոցներով լուր է տարածում, թե Շապուհը մտադիր է բռնել ու սպանել Արշակին: Երբ Արշակն իմանում է այդ մասին, խորհուրդ է անում իր խորհրդականների հետ եւ մի գիշեր վեր կենում եւ հայոց բանակում եղած մարդկանց հետ ձի նստում ու փախչում՝ վերադառնալով Միջնաշխարհ:

Երբ այս ամենի մասին իմանում է Շապուհը, իր ավագ մեծամեծներից շատերին ուղարկում է Հայոց թագավորի հետեւից՝ սիրո ու միաբանության երդումով, որպեսզի նա ետ դառնա եւ միասին քննեն հանգամանքներն ու պատժեն մեղավորներին: Սակայն Հայոց արքան չի կամենում լսել Շապուհին եւ չի վերադառնում Պարսկաստան: Արշակը, չհավատալով Շապուհի խոսքին, մերժում է նրա առաջարկը, որով էլ խախտվում է հայ-պարսկական ռազմական դաշինքը: Ինչպես Փավստոս Բուզանդն է գրում, այդ օրից սկսած պատերազմ, կռիվներ ու ճակատամարտեր ծագեցին Հայոց Արշակ եւ Պարսից Շապուհ թագավորների միջեւ:

Հռոմեական զորքը մեծ կորուստներ է կրում պարսիկների հարձակումներից: Կոստանդիոս II կայսրը գալիս է Արեւելք՝ գլխավորելու պայքարը: Նրա հրավերով Արշակ II-ը մեկնում է Կապադովկիայի Կեսարիա քաղաքը: Մեծ պատիվներով Կոստանդիոսն ընդունում է նրան: Արշակն ու Կոստանդիոսը վերականգնում են հայ-հռոմեական դաշինքը, որն ամրապնդվում է Արշակի եւ Կոստանդիոսի մահացած եղբոր նշանածի՝ Օլիմպիայի ամուսնությամբ: Փառանձեմ թագուհին, սակայն, չի կարողանում հաշտվել այս իրողության հետ: Նրա ծառաներից մեկը թունավորում է Օլիմպիային, ինչը եւ բացասաբար է ազդում արդեն հայ-հռոմեական հարաբերությունների վրա:




Պարսկա-հռոմեական պատերազմն ավարտվում է հռոմեացիների պարտությամբ: Հուլիանոս կայսրը (361-363 թթ.) թեեւ իր զորքերով գրեթե հասել էր մինչեւ Պարսկաստանի մայրաքաղաքը՝ Տիզբոն, սակայն պարտվում է եւ վերքերից մահանում: Մովսես Խորենացին պատմում է. «Այս բոլորից հետո ամբարիշտ Հուլիանոսը փորից վիրավորվելով սատկում է Պարսկաստանում, ինչպես արժան էր նրա չար խորհուրդների համար: Նրա զորքը ետ դարձավ, թագավոր ընտրելով Հոբիանոսին, որը ճանապարհին վախճանվեց՝ Բյուզանդիոն չհասած»:

Շապուհի եւ Հովիանոս կայսեր (363-364 թթ.) միջեւ 363 թ. կնքված պայմանագրով Մեծ Հայքի հարավային հինգ գավառները, Մծբին քաղաքը եւ Հյուսիսային Միջագետքի մի քանի բնակավայրեր անցնում են Սասանյանների իշխանության տակ: Նույն պայմանագրով կայսրն այլեւս չէր օգնելու Հայոց արքային՝ ընդդեմ Սասանյանների: Ըստ Փավստոս Բուզանդի հաղորդման՝ կայսրը Շապուհին վստահեցրել էր. «Եթե կարող ես՝ հաղթիր նրանց եւ քո ծառայությանդ ենթարկիր, ես նրանց օգնության չեմ գա»: IV դարի հռոմեացի պատմիչ Ամմիանոս Մարկելլինոսն այդ պայմանագիրը որակել է որպես «ամոթալի պայմանագիր»:

Եվ այսպես, Մեծ Հայքի թագավորության զորքերը Հայոց արքա Արշակի եւ սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ մտան մի քանի տարի տեւած պայքարի մեջ՝ Հայաստան ներխուժող Սասանյանների զորքերի դեմ եւ առաջին իսկ ճակատամարտերում հաղթանակներով պսակեցին Հայոց զենքը:

***Էդուարդ ԴԱՆԻԵԼՅԱՆ***
*Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*



Սկիզբը՝ էջ 6

# ՇԵՆՈՒԴԱ Գ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## Սրբազան ավանդություն

### Թ. ՎԱՎԵՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՎԵՐ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Նրանք, ովքեր մերժում են Ավանդությունը, իրենց առարկությունը հիմնում են այն պատճառաբանության վրա, թե Տեր Հիսուս Քրիստոսը մերժում է Ավանդությունը, երբ մեղադրում է օրենսուսույցներին եւ փարիսեցիներին՝ ասելով. «Իսկ դուք ինչո՞ւ եք մեղանչում Աստծո պատվիրանի դեմ ձեր ավանդության պատճառով» (Մատթ. ԺԵ 3), եւ երբ դատապարտում է նրանց որոշ սխալ ավանդություններ (Մատթ. ԺԵ 4-6):

Նրանք իբրեւ պատճառաբանություն գործածում են նաեւ առաքյալների խոսքերը. «Զգո՛ւյշ եղեք, չլինի թե մեկը մոլորեցնի ձեզ ճարտարամտությամբ եւ սնոտի խաբեությամբ, ըստ մարդկային ավանդության եւ այս աշխարհի օրենքների եւ ոչ թե ըստ Քրիստոսի» (Կող. Բ 8):

Սրբազան Ավանդության մասին դատումներ անելիս մենք նկատի չունենք մարդկանց կողմից սահմանված դատարկ ավանդությունները, ոչ էլ նրանք, որոնք համաձայն չեն Սուրբ Գրքի ուսմունքին ու հոգուն, ինչպես այն ավանդությունները, որոնց ունայնությունը Տեր Հիսուսը բացահայտեց: Մենք նկատի ունենք ճշմարիտ Ավանդությունը, որը համաձայն է՝

ա) Տեր Հիսուս Քրիստոսի այն վարդապետություններին, որոնք մեզ հասել են Ավանդության միջոցով:

բ) Առաքելական Ավանդությանը, այսինքն՝ առաքյալների այն վարդապետություններին, որոնք մեզ հասել են սերնդեսերունդ ավանդման միջոցով:

գ) եկեղեցական Ավանդությանը՝ վավերացված եկեղեցական սուրբ ժողովներով. սա վերաբերում է եկեղեցու կանոններին ու կարգերին եւ այն ամենին, որ ընդունել ենք եկեղեցու հայրերից, ուսուցիչներից եւ հավատքի առաջամարտիկներից:

Սա մեզ առաջնորդում է դեպի մյուս կետը.

### Ժ. ԵԿԵՂԵՑՈՒ ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ԵՎ ՕՐԵՆՔՆԵՐ ԿԱՐԳԵԼՈՒ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այս իշխանությունն առաքելական հայրերին տրվել է հենց Տիրոջից, երբ ասաց նրանց. «Ինչ որ կապեք երկրի վրա, կապված կլինի երկնքում, եւ ինչ որ արձակեք երկրի վրա, արձակված կլինի երկնքում» (Մատթ. ԺԸ 18): Եկեղեցին իր այս պարտականությունը սկսել է կատարել 45 թ. Երուսաղեմում գումարված առաջին եկեղեցական ժողովով, ուր քննարկել է հեթանոսների կողմից հավատքի ընդունման հարցը, եւ առաքյալները որոշում են կայացրել չդժվարացնել այն նրանց համար՝ ասելով. «Սուրբ Հոգուն եւ մեզ հաճո թվաց ավելի մեծ բեռ չդնել ձեզ վրա, բացի այս կարեւոր բաներից՝ կուռքերին զոհվածից, արյունից, խեղդված բաներից եւ պոռնկությունից հեռու մնալուց» (Գործ ԺԵ 28-29):

Ուստի սուրբ ժողովները՝ տեղական եւ տիեզերական (ընդհանրական), հաջորդաբար գումարվում էին եկեղեցու ուսուցման, օրինակարգման եւ կանոնականացման իշխանությամբ, որը Տերը շնորհեց քահանայությանը: Այս ժողովները եկեղեցու համար սահմանել են վարդապետություններ, որոշումներ եւ կանոններ, որոնք մասն են դարձել եկեղեցական Ավանդության:

### ԺԱ. ՃՇՄԱՐԻՏ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Այն պետք է չհակասի Սուրբ Գրքին (Գաղ. Ա 8):
2. Այն պետք է չհակասի եկեղեցական ուրիշ ավանդությունների:
3. Այն պետք է ընդունվի եկեղեցիների կողմից:

Հայտնի է, որ յուրաքանչյուր նոր սերնդի օրոք նոր փոփոխություններ են տեղի ունենում, որոնք չկային նախորդ սերունդների ժամանակ: Կրոնի տեսակետը սրանց վերաբերյալ պահանջվում է այն նպատակով, որ մարդկանց մտքերը չմոլորվեն կամ չշփոթվեն ճիշտի եւ սխալի զանազանման մեջ, որովհետեւ ոչ բոլոր մարդիկ ունեն կրոնական գիտելիքներ կամ գիտեն, թե ինչ է գրված Սուրբ Գրքում:

Ուստի եկեղեցին ուսուցման եւ օրինակարգման իր իշխանությամբ ներկայացնում է կրոնի տեսակետը նման հարցերի վերաբերյալ, որովհետեւ ըստ Սուրբ Գրքի՝ օրենք է պահանջվում քահանայի բերանից: Իրար հաջորդած սերունդների ընթացքում եկեղեցու վարդապետությունները վերածվել են Ավանդության՝ դառնալու համար բոլոր սերունդների ժառանգությունը:

### ԺԲ. ԱՌԱՔՅԱԼՆԵՐԸ ՊԱՏՎԻՐՈՒՄ ԵՆ ՊԱՀՊԱՆԵԼ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ:

Ս. Պողոս առաքյալն ասում է. «Այսուհետեւ, եղբայրներ, հաստատուն եղեք եւ ամո՛ւր պահեք այն ավանդությունները, որոնք սովորեցիք թե՛ մեր խոսքով, թե՛ նամակով» (Բ Թես. Բ 15): Նա նաեւ ասում է. «Պատվիրում եմ ձեզ, եղբայրներ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով, որ խուսափեք ամեն եղբորից, ով ստահակությամբ է ընթանում եւ ո՛չ ըստ այն ավանդության, որն ընդունեցիք մեզանից» (Բ Թես. Գ 6): Կորնթացիներին էլ ասում է. «Գովում եմ ձեզ, որ հիշում եք ինձ ամեն ինչում եւ պահում եք ավանդությունները, ինչպես ավանդեցի ձեզ» (Ա Կոր. ԺԱ 2):

Մեր ցավն ենք արտահայտում այն մասին, որ մեր եղբայր բողոքականները Սուրբ Գրքի իրենց թարգմանության մեջ (բնագրում՝ փակագծերում, ավելացված է՝ «Բեյրութի թարգմանություն») այն մասերում, որոնք հաստատում են Ավանդության գաղափարը, «ավանդության» փոխարեն գործածում են «ուսուցում» բառը եւ պահում «ավանդություն» բառն այնտեղ, ուր այն վերաբերում է սուրբ եկեղեցու կողմից մերժված վաս ավանդություններին:

Այնուամենայնիվ, թեեւ բողոքականներն ուրանում են Ավանդությունը, սակայն ունեն ավանդություններ, որոնք հավատարմորեն պահում են, եւ գործածում են ծեսեր, թեեւ ծեսը մերժում են: Նրանք ունեն հատուկ աղոթքներ եւ հաստատագրված ընթերցվածներ ծննդությունների, ամուսնության, մկրտության եւ թաղումների համար, թեեւ չեն ընդունում կանոնական աղոթքները: Նրանք պահում են իրենց սեփական ավանդությունը, սակայն մերժում ցանկացած ավանդություն, որը չի համաձայնում իրենց հավատքին, թեեւ եկեղեցու սրբազան ավանդությունը թանկագին ժառանգություն է եւ ցանկացած եկեղեցու համար նրա բացակայությունը մեծ կորուստ է, քանի որ այն դառնում է եկեղեցի առանց անցյալի եւ առանց ուղեցույցի՝ կառավարելու ըմբռնման եւ մեկնաբանության մեջ յուրաքանչյուր անձի ազատությունը:

*Շարունակելի*

*Թարգմանությունը՝*
*Սեդա ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆԻ*

---

# ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ

## ՀՐԱՇՔՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

## ՔԱՐԱՑԱԾ ԱՂՋԻԿԸ

Սկիզբը՝ էջ 7

Սուրբ Ծննդյան տոնին (հավանաբար Գլինսկյան անապատից) եկավ վանական Սերաֆիմը, կատարեց Ջրօրհնեքի կարգ եւ օրհնեց սենյակը: Դրանից հետո նա կարողացավ Զոյայի ձեռքերից վերցնել պատկերը, եւ պատշաճ մեծարանք մատուցելով Հրաշագործի սրբապատկերին, դրեց նախկին տեղը: Նա ասաց. «Հիմա պետք է Մեծ օրը (այսինքն՝ Զատիկին) երկնային նշանի սպասել: Եթե նշան չլինի, ուրեմն աշխարհի վերջը մոտիկ է»:

Զոյային այցելեց նաեւ Կրուտիցկի եւ Կոլոմնայի միտրոպոլիտ Նիկոլայը, որը նույնպես կարգ կատարեց եւ կրկնեց բարեպաշտ վանականի խոսքերը. «Մեծ օրը (այսինքն՝ Զատիկին) նոր նշանի պետք է սպասել»:

Ավետման տոնից առաջ (այդ տարի՝ Մեծ պահոց երրորդ շաբաթ օրը) եկավ մի բարետեսիլ ծերունի եւ խնդրեց, որ թույլ տան մտնի Զոյայի մոտ: Բայց հերթապահ միլիցիոներները մերժեցին: Նա եկավ նաեւ հաջորդ օրը եւ կրկին մերժվեց՝ այս անգամ նոր հերթափոխի հսկիչներից: Երրորդ անգամ՝ հենց Ավետման օրը, հերթապահները նրան ներս թողեցին: Պահակախումբը լսեց, թե ինչպես ծերունին Զոյային քնքշորեն ասաց. «Դե ինչ, հոգնե՞լ ես կանգնած»:

Անցավ որոշ ժամանակ: Հերթապահ միլիցիոներները որոշեցին դուրս հրավիրել ծերունուն, բայց... նա սենյակում չէր: Բոլորը համոզված էին, որ ծերունին ինքը՝ Սուրբ Նիկողայոս Հրաշագործն էր

Զոյան կանգնած մնաց չորս ամիս (128 օր)՝ մինչեւ Զատիկ, որն այդ տարի ապրիլի 23-ին էր (նոր տոմարով՝ մայիսի 6-ին):

Հիսուս Քրիստոսի Լույս Հարության գիշերը Զոյան սկսեց բարձրաձայն կանչել. «Աղոթե՛ք»: Սահմռկած գիշերապահները հարցրին նրան. «Ինչո՞ւ ես այդպես սարսափած գոռում»: Հետեւեց պատասխանը. «Ահավոր է, երկիրն այրվում է: Աղոթե՛ք: Ամբողջ աշխարհը մեղքերի մեջ կործանվում է: Աղոթե՛ք»:



Այդ պահին նա հանկարծ վերակենդանացավ, մկանները ստացան փափկություն եւ կենսունակություն: Նրան անկողին դրեցին, բայց աղջիկը շարունակում էր կանչել եւ խնդրել բոլորին աղոթել՝ մեղքերի մեջ կործանվող աշխարհի, անօրենությունների մեջ այրվող երկրի համար:

Զոյային հարցնում էին. «Ինչպե՞ս էիր ապրում: Ո՞վ էր քեզ կերակրում»: «Աղավնիները, աղավնիներն էին ինձ կերակրում», հետեւում էր պատասխանը, որում հստակ ազդարարվում էր Տիրոջից ներում ու ողորմություն գտնելը: Տերը ներել էր Զոյային՝ Իր Սուրբ Վկայի՝ Նիկողայոս Հրաշագործի բարեխոսությամբ եւ հանուն այն ահավոր չարչարանքների, որ կրել էր աղջիկը՝ 128 օր կանգնած մնալով:

Կատարվածն այնպես էր ցնցել Կույբիշեւի եւ մերձակայքի բնակչությանը, որ բազմաթիվ մարդիկ, տեսնելով հրաշքները, լսելով մեղքերի մեջ կործանվողների համար աղոթելու աղաղակներն ու խնդրանքները, հավատի եկան: Ապաշխարությամբ շտապեցին եկեղեցի: Չմկրտվածները մկրտվեցին: Խաչ չկրողները սկսեցին կրել: Դարձի եկածներն այնքան շատ էին, որ եկեղեցիներում խաչերի պակաս զգացվեց:

Մեղքերի ներում հայցելով՝ ժողովուրդը երկյուղով եւ արցունքներով աղոթում էր՝ կրկնելով Զոյայի խոսքերը. «Ահավոր է: Երկիրն այրվում է, մեղքերի մեջ կործանվում ենք: Աղոթե՛ք: Մարդիկ կործանվում են անօրենությունների մեջ»:

Իր մեղքը քավելու համար 128 օր կանգնելով Աստծո առաջ, անցնելով ծանր ճանապարհ՝ Զատկի երրորդ օրը Զոյան հանգավ ի Տեր: Սուրբ Հոգին պահում էր նրա հոգու կենդանությունը՝ հարություն տալով մահացու մեղքերից, որպեսզի բոլոր ողջերի ու մեռածների ապագա Հարության հավիտենական օրը մարմնով հարություն առնի հավիտենական կյանքի համար: Չէ՞ որ Զոյա նշանակում է «կյանք»:

**Հետգրություն**

Սովետական մամուլն անկարող եղավ լռության մատնել դեպքը: Խմբագրության ստացած նամակներին պատասխանելով՝ ոմն գիտնական հաստատեց, որ, իսկապես, Զոյայի հետ կատարվածը մտացածին չէ, այլ գիտությանն անհայտ պրկախտի տեսակ:

Սակայն պրկախտի ժամանակ այդպիսի քարացածություն չի լինում, եւ բժիշկները կարողանում են սրսկել հիվանդին. երկրորդ՝ պրկախտի ժամանակ հիվանդին հնարավոր է տեղից տեղ շարժել եւ պառկեցնել. եւ երրորդ՝ պրկախտն ինքնին չի կարող մարդուն դարձի բերել առ Աստված եւ երկնային հայտնություն տալ: Եվ Զոյայի միջոցով հազարավոր մարդիկ ոչ միայն դարձի եկան, այլեւ իրենց հավատը ցույց տվեցին գործերով. մկրտվեցին եւ սկսեցին ապրել քրիստոնեական կյանքով: Պարզ է, որ դրա պատճառը պրկախտը չէր, այլ Աստծո ներգործությունը, Նրա, Ով հրաշքներով հաստատում է հավատը, որպեսզի զերծ պահի մարդկանց մեղքերից եւ մեղքերի պատժից:

*Непознанный мир веры*
*Ռուսերենից թարգմանեց*
*Ա. Ա.*

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
ք. Վաղարշապատ, ՔԴԿ
**Հեռախոս՝**
**(0+31) 56780, 54510**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Տպոր. է տպագր. 16. 1. 2004թ.
Տպաքանակը՝ 2500
Գինը՝ 50 դրամ